

հասնելու ատեն:

Յակոբ Զուգայեցիի նամակը դըրուած է անդօր վերջնականութեամբ մը դիմելով Պապին «գերագոյն մեծանձնութեան» որպէսզի ան տնօրինէ «ինչպէս կը վայելէ բարձրագոյն դիրքիդ»: Վերջապէս Յակոբ Կաթողիկոսն ի վիճակի չէր սպառնալու կամ այլապէս վրէժխնդրելու իր հօտին դէմ կատարուած օր ցերեկով բռնաբարութեան դէմ: Իրեն ուրիշ բան չէր մնար եթէ ոչ դիմել խոնարհօրէն եւ կարելի եղածին չափ անուշ լեզուով, բարձրագոյն դիրքով գերագոյն մեծանձնութեան... սակայն ի զուր: Լեհահայոց զաղութիւնն ի սպառ փճացումը եւ իբր հայ զաղութ վերջնական անհետացումը գլուխ հանուեցաւ առանց դանդաղելու:

Աղէքսանդր Է. հանդուցեալ Պապին յաջորդեց Կղեմէս Թ. որ ստացաւ Յակոբ Կաթողիկոսին թուղթը որուն պատասխանեց Հաւատոյ Տարածման Ժողովին Վարիչը, Կարգինալ Անտոն Պարպերինի, որ հոս պիտի արտագրենք, անմիջապէս Կղեմէս Թ. Պապին նամակը տալէս վերջ:

«Յարգելի եղբօր, Յակոբ, Մեծ Հայքի Պատրիարքին՝

ԿՂԵՄԷՍ ՊԱՊ Թ.»

«Յարգելի եղբայր, ողջոյն, եւլն... կարգալով եղբայրութեանդ նամակը դրուած մեր նախորդին, 12 Սեպտ. 1666ին, մեծ ուրախութիւն զգացինք տեսնելով անդ՝ թէ այս Ս. Աթոռին Քահանայապետը իբրեւ Կաթողիկէ Եկեղեցւոյ Գերագոյն Պետ, Երանելի Պետրոսի յաջորդ, ուղղափառ հօտին Հովուապետ եւ Յիսուսի Քրիստոսի Փոխանորդ կ'ընդունիս եւ բարեպաշտօրէն եւ խոնարհաբար կը պատուես, ինչ որ դիտենք՝ թէ նաեւ ուրիշ անդամներ, մեր միեւնոյն Նախորդին ժամանակ կատարեցիք: Սակայն, յեղակարծօրէն անտարակոյս եւ նոյնքան սրտնեղութեամբ իրազեկ եղանք՝ թէ տակաւին ճշմարտութեան կատարեալ դիտութիւնը չունիք, եւ կ'ընդունիք այն հին սխալները, զորս դատապարտեցին Փլորենտիոյ Տիեզերական Ժողովը եւ անդ նաեւ նոյնինքն Հայ Ազգը որքան բարեպաշտօրէն նոյնքան յարատեւ համամտութեամբ. (կը սխա-

լիս) դոնէ այս կէտին մէջ, կարծելով որ Պատարագի սրբադիստօրը Զոհի ընթացքին ջրախառն գինի պէտք չէ դրուի սկիզին մէջ, եւ այս պատճառաւ պէտք է յանդիմանել Բոլոնիա բնակող հայ Արքեպիսկոպոսը, որ հակառակ ձեր վաղեմի սովորութեան զայն ջրախառն կը դնէ եւ ըստ կարի հոգ կը տանի որ միւս քահանաներն ալ նոյնպէս ընեն: Զայս կատարելով ոչ միայն պէտք չէ, անտարակոյս, մեղմէ յանդիմանութիւն, այլ նաեւ այս մասին շատ գովելի է, վասնզի կ'ընէ ինչ որ Հռովմէական Եկեղեցին կը քարոզէ, որպէս բացայայտ է Փլորենտեան եւ Տրիդենտեան Ժողովներէ, եւ զոր միշտ միւս բոլոր թէ արեւմտեան թէ արեւելեան եկեղեցիները՝ առաքելներու ժամանակներէն ի վեր պահեցին: Այս բանիս եթէ հաստատապէս կ'ուզես յարիլ, եւ իրապէս հետեւիլ վարդապետութեանը այս Սուրբ Հռովմէական Քահին, զոր կը խոստովանիս հիմնուած Պետրոսէ հաւատքի ժայռին վրայ, մենք քեզ պիտի պարուրենք նոյնքան բարեացակամութեամբ, որքան սովոր ենք ընդունիլ այն անձերը, որոնք լքելով հօգինքնու փրկութեան այնքան վնասակար բաժանումները, կը բաղձան հաստատապէս յարիլ եւ միանալ այս Սուրբ Եկեղեցւոյն, որ միակ ուսուցիչն է ճշմարիտ հաւատքի: Զայս ամբողջովին կը յուսանք կրօնասիրութենէդ եւ բարեպաշտութենէդ, մանաւանդ իբր նամակիդ վերջաւորութեան բոլոր խնդիրը կը թուիս թողուլ մեր դատաստանին եւ կամքին, ինչպէս մեծապէս վայել է: Քու եռանդիդ մասին նոյն համոզումն ունէր մեր նախորդը, որուն սիրոյն համեմատութեամբ, մեր մէջ պիտի չգլուխես նուազ բարեացակամութիւն եւ սէր ի Տէր, ամէնուրեք, ըստ կարի: Սակայն այս ամէնը պիտի կարենաս աւելի մանրամասնօրէն լսել մեր յարգելի եղբայրներուն՝ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովի Ս. Հ. Ե. Կարգինալներուն նամակէն, եւ մեր յարգելի Յովհաննէս եղբօրմէ՝ Միջագետքի Արքեպիսկոպոսէն, որ այժմ քովդ կը վերադառնայ: Եղբայրութեանդ եւ Ազգիդ համայն կաթողիկէներուն կը շնորհենք Առաքելական Օրհնութիւն մեր Քահանայապետական սըր-